

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011865942 և 2011869490 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<30>> 11 2020թ 7-13- 15073

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Դավիթ Հարությունյանի ՄԴ/150656-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի փողոցի 3-րդ շենքի 13-րդ բնակարանի բնակիչ Դավիթ Հարությունյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011865942 և 2011869490 որոշումները՝ նշելով, որ արձանագրված իրավախախտումները կատարել է զորամաս գնալու ճանապարհին:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտերը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վիճարկվող որոշումներով ամրագրվել է, որ <<MAZDA>> մակնիշի 35ZU940 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 26.10.2020թ-ին ժամը 06:22-ին Երևան քաղաքի Գայի պողոտայի հատվածում երթևեկելով 80կմ/ժ արագությամբ և 26.10.2020թ-ին ժամը 19:29-ին ք. Երևան քաղաքի Աճառյան փողոցի հատվածում երթևեկելով 75կմ/ժ արագությամբ գերազանցել է երթևեկության սահմանված արագությունները, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի:

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում չի հիմնավորվել դիմումատուի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարելու հանգամանքը, քանի որ դիմումին կից որևէ ապացույցով դիմումատուն չի

ապացուցել արարքը հարկադրված կատարած լինելու մասին իր պնդումը, հետևաբար վիճարկվող որոշումները բեկանման ենթակա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011865942 և 2011869490 որոշումների հիմքում դրված փաստական հանգամանքի դեմ բերված գանգատը թողնել առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվա հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Դավիթ Հարությունյանին:



**Ե.Կարապետյան**

Կատարող՝ Է.Հովհաննիսյան  
Հեռ. 011544783